ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴՐԱՄ
ԱՌԸԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London, W. [Angleterre]

Ամեն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով եւ ժողովրդի համար:

Իւրաքանչիւրի եւ ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանքը — դա է ճշմարիտ ազատութիւն:



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ
ՏԱՐԵԿԱՆ . . . . . 5 կ.
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ . . . 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ . . . ½ „

Ժողովուրդ, դու քնդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը:

Արեան ճահիճներ — ահա ազատութեան ճանապարհը:

Ժողովուրդ, մի աղերսիր, այլ պահանջիր եւ ձեռք բեր

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ — ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ | ԼՕՆԴՕՆ | Nr 4-5. ՕԳՈՍՏՈՍ--ՍԵՊՏ. Nr 4-5. | 1897 | ՄԻԱՄՍԵԱՅ



ՀԱՇՏՈՒԹԻՒՆ.

Մոգական խօսքը մէջ տեղ է ձգւած։ Խելքի և սրտի անդամալոյծներն ագահութեամբ ընկել են վրան։ Այդ խօսքում նրանք ուզում են գտնել ո՛րը իր կորցրած պատւի, ո՛րը՝ իր կորցրած հանգստի, ո՛րը՝ իր կորցրած կարողութեան վրէժն ու ապաւէնը։

Հաշտութի՜ւն, պոռում են նրանք չորս կողմից՝ հագած քաղաքագէտի կեղծամ իրանց գլխին։ Կարծում են, որ այդ բաւական է քաղաքագէտ լինելու համար։

Հաշտութի՜ւն, և երազում են ազատւել յեղափոխական մղձաւանջից։ Յեղափոխութեան համը նրանց դիւր չեկաւ։ Ինչպէս լիմոնից, նրա համից նրանց երեսները ծռմռեցան ամենածաղրական ծամածռութիւններով։ Եւ այդ միջոցին նրանք ոկսան հաջել յեղափոխութեան վրայ։

Հաշտութի՜ւն, և ո՞վ է ասում է այդ։ Արդեօք հա՞յրը, որ կոտորածի մէջ կորցրեց իր զաւակներին և տունն ու տեղը։ Արդեօք մա՞յրը, որ ողբում է իր անարգւած աղջկայ մորթման վրայ։ Արդեօք քո՞յրը, եղբա՞յրը, որ աստանդական թափառում են՝ մեռցած որբ ու թշւառ։ Արդեօք հայ ժողո՞վուրդը, նոյն պարզ, աշխատաւոր ու բարի ժողովուրդը, որ կոտորածների տրհաւիրքների միջով անցաւ՝ հարիւր հազարաւոր դիակներ թողնելով, որ այսօր թշւառ ու անօգնական՝ իր ուրացած զաւակների — մեծամիտ խեղկատակների — կողմից անիծւում, ծաղրւում է և ոչխարի տեղ դրւում։

Ո՛չ, դրանք չեն։ Հաշտութիւն պոռացողները Կ. Պոլսի ու Եւրոպայի և այլ ազատ երկիրներում ազատ ապրող անդործներն են։ Տխմարներ կամ ջիզիմներ, շահխնդիրներ կամ հացկատակներ, դաւաճաններ կամ խաբեբաներ, որոնք իրանց երևակայելով ազգային մեծամեծներ, պատրաստ են սուլթանի ոտքերը լզել և ազգը ծախել, եթէ միայն դա իրանց ձեռքից գար։ Եւ ստորաքարշները նոյն խորհուրդը տալիս են հայ ժողովրդին։ Խրթի զաւակներ, որոնք իրանց հանգիստը ձեռք բերելու, իրանց առևտուրը շահաւէտ դարձնելու և իրանց ազգային ցեցի գոյութիւնը Կ. Պոլսում չաղ պաշտօններով վարելու համար՝ այժմ հաշտութիւն են պոռում և սուլթանին մեղայ գալիս։ Ժողովո՞ւրդը ... ժողովուրդը նրանց համար միայն մի գործիք է իրանց շահերի համեմատ խաղացնելու։ Օգտւելով այն քաղաքական տօթից, որ այսօր խեղդում է հայ ժողովրդին, մժեղների ու մոծակների պէս նրանք վիտում են հրապարակի վրայ և իրանց խայթոցներով ձգնում թունաւորել հասարակութեանը։

Հաշտութի՜ւն... Տխմարե՜ զառանցանք։ Երբ հայ ժողովրդի և թիւրք կառավարութեան միջև կայ մէկ ահագին վէհ՝ լցւած հայի արիւնով. երբ Հայաստանում ամեն մի տուն լալիս է իր որ և է անդամի կորուստը, կամ անպատւութիւնը, կամ իր սեփական քայքայումը. երբ արեան առարկութիւնը, այդ սոսկալի արդումէնտը, այլ ևս ընդ միշտ բաժանել է Հային սուլթանների իշխանութիւնից, և ամեն-մի շունչ, ամեն ձայն պոռում է վրէժ, — այդ ժամանակ հաշտութիւնը նշանակում ժողովրդին ուրանալ, ազգայնապէս կորչել։ Ո՛չ, հաշտութիւն չէ կարող լինել։

Այլ և ընդհակառակը։ Անհաշտութեան զգացումն է այսօր հայի ոյժն ու զօրութիւնը. անհաշտութեան զգացումն է նրա յոյսն ու փրկութիւնը. անհաշտութեան զգացումն է նրա ազգային ու մարդկային ապագան շինողը, նրա լաւագոյն ձգտումների ու մտածողութեան դրդապատճառն ու աղբիւրը, նրա հոգեկան աղնւացման ու ազգային ինքնաճանաչութեան միակ ու ճշմարիտ արտայայտութիւնը։

Խաւարի ու յետադիմութեան զաւակները, հոգով՝ ստրուկ, սրտով՝ վախկոտ ու քծնող, խելքով՝ տգէտ ու ապականւած, թո՛ղ պոռան հաշտութիւն։ Այն, ինչ որ պատմականապէս այլ ևս անհնարին է, մարդկային ոյժը չէ, որ կարող կը լինի հընարաւոր դարձնել։ Անհնարին է հաշտութիւն պատմականապէս՝ մեր ժողովրդի ո՛չ միայն կրած արհաւիրքների շնորհով, այլ և նրա պատմական կեանքի իմաստի և բընական կերպով նրա ընտրած առաջադիմական ճանապարհի շնորհով։

Հաշտութի՜ւն... Գնացէ՛ք՝ ինքներդ հաշուեցէք. ձեր փափաքն այդ է միայն։ Եւ ձեր այդ ամօթը ծածկելու համար մի փորձէք հասարակութեան մէջ միամիտներ գտնելով, թուրթակի պէս նրանց կրկնել տալ ձեր ատոր զգացումների արտայայտութիւնները։ Մի՛ ամաչէք, գնացէք, ընկէք սուլթանի ոտքը, թէ թէկի տւած Նուբարների և Օրմանեանների հետ։ Դուք արդէն թիւրիմացութեամբ էք ձեր բուն կոչումից հեռացել։ Ձեր տեղն այնտեղ է, սուլթանի ոտքի տակ։ Ձեր սիրտն ու միտքն արդէն այնտեղ է, այն ոտքի տակ. մի ամաչէք, գցեցէք այնտեղ նաև ձեր մարմինը։ Հոգեպէս սուլթանի ոտք լզող եղած ժամանակ, մարմնապէս էլ լինելն արդէն մեծ բան չէ։

Հաշտութի՜ւն... Այո՛, ձեզ համար և միայն ձեզ համար։ Գնացէք, բարի՜ ճանապարհ։

Իսկ ժողովուրդը — հպարտ՝ իր տանջանքներում, տոկուն՝ իր վէհ գործում և ոգեւորւած իր մեծ նպատակի համար՝ ժողովուրդը ձեզ չի էլ տեսել երբէք, ձեզ չի էլ նկատիլ, այլ դարձեալ կը շարունակէ իր դժւարանց շաւիղը, այն կը կոխէ յեղափոխական աշխատաւորի հաստատ քայլով դէպի առաջ, միշտ առաջ։

Հաշտութի՜ւն... Ոչ՜ ծառաներ Մեծ Մարդասի՛ի, էլ բաւական է որքան խաբեցիք ժողովրդին։

ԳԻՍ ՈՒ ԳԻՆ

Մ. Շերազ իր Թերթին մէջ կուլայ, որ մենք կուզենք իրեն „բարոյապէս սպաննել“։ Քաւ լիցի. թող հանգիստ քնանայ իր փափուկ բարձերուն վրայ։ Բարոյապէս կրնայ ըսպաննուիլ միայն այն մարդը, որ բարոյականի տէր է։

* * *

Վերջապէս խեղճուկ „Հայ.“ Գաբրիէլը գըտնահատող մը ունեցաւ։ Ատիկա միւսիւ Շերազն է, յաւիտենական պատգամաւորը Հայոց ազգի։ Գաբրիէլեանի ամեն-մի անհեթեթութիւնը Շերազ օդին մէջ կը բռնի, որ գետին չիյնայ ցեխին մէջ, և իսկոյն կը զետեղի իր Թերթին մէջ, երևի ցեխի տեղ ընդունելով այն ... Բայց ուղղենք մեր խօսքը. Շերազն արդարացուցիչ հանգամանք մ'ունի. Գաբրիէլեան անհեթեթ խօսքերը Նազարբէկին դէմ են ... և իր Թերթին մէջ անոր դէմ գրածները զետեղելով՝ նա այդպիսով Նազարբէկը կուզէ ցեխին մէջ նետած ըլլալ։

* * *

Խելացի Գաբրիէլ, յաւիտենական պատգամաւոր Զերազ, Արփիարական Արշակաւան և այլն, և այլն՝ ամէնքն այժմ սրբազան արշաւանք են մղած Նազարբէկին և Հնչակին դէմ և ամէն տեղ խօսք ու Հայհոյանք, ղրպարտութիւն ու սուտեր կը մուրան՝ Նազարբէկին դէմ ուղղելու: Մենք անոնց խորհուրդ կուտանք աղէկ մը քրքրել սուլթանի կառավարութեան դիւանատուներն: Այնտեղ իրենց ուզածը կը գտնեն առատութեամբ և այդպիսով իրենց հնարագէտ հանճարեղ ուղեղին քիչ մը հանգիստ կուտան... և սուլթանն ա՛լ աւելի գոհ կը մնայ իրենցմէ:

* * *

Հայոց ոգւոյ յաւիտենական պատգամաւորը հայ ազգին խնդակցութեամբ կը ծանուցանէ իր Թերթին վերջին Թւոյն մէջ Թէ՝ Ալփարխա-Արփիարա-Տամատեան Արշակաւանի խաւար երկնքի վրայ յանձին արժանաւոր Տօնապետեանի մի նոր մեծ աստղ է երևան եկած, որ գիտականներն կանուանեն գիսաւոր աստղ, իսկ ժողովուրդը պարզապէս՝ պոչաւոր աստղ:

ԱՊՏԱԿԻ ԼՐԱԲԵՐԸ ՄԱՆՉԵՍՏՐԻՑ.

Մի երկու ամիս առաջ պարոն Մինաս Չերազը ատենախօսութիւն մը կարդաց Մանչէսդրի մէջ: Այդ Մեծապատիւ ատենախօսը Տ. Թորոս քահանայի հաւանութեամբ բարձրացաւ ամբիոնի վրայ: Անոր բնաբանն էր „ի՞նչ բանէ վնասուեցաւ հայոց ազգը“, և սկսաւ կասկածոտ ձայնով մը. և յետոյ ճերազական խորամանկ շարժումներով, պ՚չն ու գլուխը ծռմռելով շարունակեց իր նշանաւոր ճառը: „Հայոց ազգը վնասուեցաւ նախ զրադաշտ — կրակապաշտներէն, յետոյ մահմետական ցեղերէն, յետոյ Լէնկթիմուրէն, Ենիչէրիներէն, Չերքէզներէն, Քիւրտերէն... վերջապէս „Հնչակեաններէն“. Ա՛խ Հնչակեաններէն, նամանաւանդ Նազարբէկէն, որը առանց ապագան, կամ ազգի օգուտը խորհելու կը հրամայէ ժողովրդին, որպէսզի ապստամբէ այն տէրութեան դէմ, որը քիչ ժամանակ առաջ հզօր պետութեանց դիմադրած, պատերազմ մղած և երբեմն, յաղթած ալ է: Ահա այսպէսով ազգակործան Հնչ. Յեղ. կուսակցութիւնը ենթարկեց ազգը աննկարագրելի Թշուառութեան մը: Կարծեմ, սիրելի հանդիսականներ, դուք ալ գիտցաք այժմ, Թէ „հայ ազգը ի՞նչ բանէ վնասուեցաւ... — Հնչակեաններէն“...

Չերազ էֆէնտին չէր զլանար ամէն րոպէ խոշորկէկ, նոյնիսկ իր գլխէն ու բոյէն խոշորկէկ, նախատական խօսքեր կարկտի նման տեղացընել „Հնչակի“ գլխին, նա մանաւանդ երբ կը յուզուէր իր իմաստալից խօսքերու ազդեցութենէն: Մինաս էֆէնտին իր ճարտարախօսական ձևերով շարունակ կը ջանար վերջին տարիներու մէջ Թափուած տաճկահայոց արեան կարասը կոտրելու մեղաւոր „Հնչակի“ վրայ: Սակայն, ներողութիւն, աւաղ, սխալմամբ ըսաւ, երբ չափազանց յուզուած էր մեր պարոն ճառախօսը, Թէ, „ահա այսպէս, սիրելի ունկնդիրներ, յեղափոխութիւնը կամ ապստամբութիւնը այս տեսակ վնասներ հասուց ազգին“... Յանկարծ սԹափուեցաւ և „գաց, որ սխալ քայլ մը առած է և սկսաւ աղուէսի ճարպիկութեամբ յետ. յետ նահանջել, բայց ի՞նչ ըրած, ստիպուեցաւ ըսելու, որ ուրիշ յեղ. կուսակցութիւններ ալ կան. սակայն անոնցմէ քիչ վնասուեցաւ ազգը, որովհետև մէկը ապակեդրոնացում է, միւսը մէկ ուրիշ կերպ է, երրորդն ալ այլակերպ է, և այլն...

Սակայն այս ամէնը ոչինչ, դեռ ես ամէնակարևորը կը մնար յետոյ, այո, ամէնակարևորը, որուն համար պատրաստ էր շատ բաներ զոհել և ամէն գոյնի մէջ մտնել ներկուելու համար... Պատուելի Մինասը մի քանի անգամ հազաց, կոկորդը մաքրեց և շտկուելով, ամբողջ քսան րոպէ, ճառեց իր աղքատիկ վիճակի մասին... և խնդրեց, որ գէԹ 100 հատ գիրուկ բաժանորդներ ունենայ Մանչէսդրի մէջ իր պատուական „L'Arménie“ լրագրի համար: Պատուելի ատենախօսը իր հացը խուզեց և կապիկի նման ծնկները կծկելով նըստեցաւ: Աստուած Նազարբէկին համբերութիւն տայ և Չերազ Մինաս էֆէնտիին մի քանի հատ միամիտ բաժանորդ... ուրեմն կեցցէ աչքակապութիւն և մեր... բերլինական պատգամաւորը...

ԼՐԱԲԵՐ.



ՊԱՐԱԶԻՏ ՏԻՊԵՐ „ԳՈՐԾԻՑ“ ԱՆԻԱՆ ՏԱԿ.

— Ընցնում է, տեսէք, փողոցի այն անկիւնից, արհեստական սեգ քայլուածքով, հագին ամենավերջին մոդայից Ֆրակ, պանտալօնը խնամով հարդուկուած, ծաղկանկար ձիւնի նման սպիտակ շապիկ՝ Թռթռաւոր ալապարիզեան վզկապով, նեղ՝ բարակ քԹաւոր փայլուն կօշիկ, ոսկեգլուխ բարակ գաւազանով. մազերը անուշահոտ իւղով օծուած և խնամով սանտրուած, բեխի երկու ծայրերը բարակցրած, տեսէք անցնում է. քիչ աւելի ուշադրութիւն դարձրէք, նա քԹի վրայ կրում է ակնոց, որի անկից կախ ընկած ոսկէ նուրբ շղԹան երկու կողմի վրայ ճօճում է, տեսէք, ինչպիսի կօկեԹաւոր կերպով շարժում է ձեռքի գաւազանը, քայլածքը ա՛յնքան արհեստական է, որ կարելի է որոշ կերպով նըկատել իր Թիկունքների, մէջքի և ոսկրների շարժումները, խնդրեմ մի քայլ ևս, դուք պիտի նկատէք նրա կրծքի վրայ խրած սիրուն գունաւոր վարդը: Պարոնը իդէալիստ է... Եւ ուրեմն գեղեցկին սիրահար. դրա համար տեսնում էք նա ստէպ իր „պօնժուրով“ ճկոյթ մատը դուրս ցցած բռնում է իր սիլինտիրը, շատ քաղաքավարութեամբ իր մէջքը կախ տալով և արմուկը բաւական հեռացնելով իրանից՝ բարևում և մի քանի սիրուն խօսքերից յետոյ արդէն նրանք Թև Թևի տուած գնում են...

Պարոնը հասարակ մէկը չէ. նա, այսպէս ասած, Պօլսական շըլըխտի գրականութեան ներկայացուցիչներից մէկն է: ի՞նչ եմ ասում, իրա ասածով, ողջ Պօլսում միայն մէկ գրագէտ կայ, և այդ ինքն է...

Սակայն նրա արժանիքները միայն այսքանը չեն. նա տաղանդաւոր է, մեծ հռչակ ունէ և, գիտէ՞ք, Պօլսում յեղափոխական էլ է եղած... Եւ պէտք է ասել, որ դաւաճան Արփիարեանի էլ ձագուկն է...

— „Խո՛ւհ... Բաւական է“ գոչեցին ունկընդիրներս, „հասկացանք...“

* * *

Ընցեալ օրը տրամադրութիւնս շատ վատ էր, որովհետև մի վատ մարդ, որու անուան ըսկիզբը համապատասխանում է... հանդիսաւոր ... հանդէսի, այսինքն տօն, որը բոլորովին չէ համապատասխանում այդ վատ մարդուն, և անուան երկրորդ կէսը համապատասխանում Ֆըրանսիական Bête-ին, որ հայերէն նշանակում է անասուն, — նաև ճճի. այս վերջիններս, երկուսն էլ, ընդհակառակը բոլորովին համապատասխանելով այն վատի ամբողջ էութեան: Վերջապէս վատ մարդու վատ արարքների շնորհով վատ տրամադրութեան մէջ էի անցեալ օրը. և ահա հէնց անցեալ օրն էլ այդ աուիԹով գրեցի հետևեալը, որի վերնագիր է՝ Ծիծաղի ողբը. —

Ո՜հ, ինչ հիանալի գիւտ պիտի լինէր, եԹէ հնարուէր մէկ այնպիսի քենայ, որի շընորհով կարելի լինէր ճանաչել մարդկանց, ճանաչել նրանց վատ կամ բարի լինելը և տալ նրա համեմատ բարեկամների ընտրութիւն անել:

Ներկայանում են քեզ, բարեկամական ձեռք են կարկառում, քաղցր լեզւով ԹուԹակի նըման Թափում են ամէն տեսակ սիրուն խօսքեր քո հասցէին, պախարակում, քարկոծում քո Թշնամիներին, մի խօսքով, աշխատում են ցոյց տալ զոհաբերութիւն. հաւատում ես, ընդունում նրա ձեռքը և հրապարակւում է արդէն ձեր բարեկամութիւնը: Բայց հէնց որ իրանց մէկ անտեղի կամ օրինակը չեղած մի չարչիական պահանջին գոհացում չը տուեցիր, կամ իրանց մէկ անպատուաբեր, լկտի վարմունքին համար նկատողութիւն արիր, վա՜յն է եկել քո գլխին, էլ ի՜նչեր չասես, որ չը խօսեն քո մասին: Մեղքերի մէջ կը զըպարտեն, կեղտոտ յանցանքներ կը հնարեն վրադ: Դեռ այդ ոչինչ. նրանք հէնց առաջին առիԹով կը գնան ձեռք կը տան այն մարդկանց, որոնց մի քիչ առաջ դաւաճանութեան մէջ էին մեղադրում հրապարակապէս: Դեռ այդ էլ բաւական չէ, նրանք աւելի առաջ կը գնան, փողոցում հանդիպած ամէն-մէկին կը տան քո բոլոր ներքին գաղտնիքները, քո կարգադրութիւնները, վերջապէս քո ամբողջ գործունէութեան պլանը, եԹէ որ և է կերպով տարաբախտաբար իմացել են... Մարդ մտածելով այդպիսի տիպերի վրայ, ակամայ փսխում է անցեալ օրը ճաշարանում կերած ծեծուած համեղ տօլման, որի նման էլ ծեծուած վախկոտ, անդէմ էակներ են, այդ տիպերը, անսկզբունք, ստոր, շահախնդիր... և, որ աւելի վատ է, Bête, Bête, Bête... անպետ... (քական)...

ԾԻԾԱՂ.

ԻՄ ՓՈՔՐԻԿ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆՍ *)

Երբ սկսայ հաւաքել իմ գոյքերս դէպի Հրատ կատարելիք ճանապարհորդութիւնից առաջ, ես մտածման մէջ ընկայ, Թէ ի՞նչ վերցընեմ հետս: Խօսք չը կայ, որ նախ և առաջ ես վերցրի շապիկներ, ցերեկւայ և գիշերային, վերցրի այլ սպիտակեղէններ. չը մոռացայ, ի հարկէ, վերցնել սև... Ֆրակը... ի՞նչպէս Թարգմանեմ. հայերէն խօսքը չը կայ... պոչը կտրած հագուստ... յետոյ անպատճառ ղ ա ղ ա ն-փ ա փ ա խ ց ի լ ի ն դ ր ը, որ հայ գործիչների խելքի պարունակողն է այժմ, վերջապէս Թուղթ, մատիտ, մելան և այլ պարագաներ գրելու համար, որոնց պէտք է գործածէի ճանապարհորդութեանս միջոցին դէպի Հրատ... Այդտեղ յիշեցի, որ „մեծ էշն ախոռումն եմ մոռացել“ և գլխովս անցաւ մի հանճարեղ միտք. հետս վերցնել մի „Հայք“ և մի „L'Arménie“ ես այդ կը տամ Հրատի ամենանշանաւոր Թանգարանին մտածեցի ես, և արդէն երևակայում էի Թանգարանապետի դէմքի երախտագին արտայայտութիւնը: Այդ բոլոր գոյքերս ծալելուց ու պատրաստելուց յետոյ, ես մտածման մէջ ընկայ, Թէ աշխարհիս երեսին ո՞րն է այն վայրը, որտեղից ես ամենաանարգել կերպով կարողանում եմ Թըռիչս առնել դէպի Հրատ: Կասկած չը կայ, որ Կ. Պօլիսն է, և հէնց իմ առաջին միտքս էլ այդ էր, և այդ էլ պէտք է լինէր, և ուրիշ արդէն չէր էլ կարող լինել: Գնացի և հասայ Կ. Պօլիս: Համնելուս պէս տեսայ, որ փողոցներում վխտում են ինչ-որ մարդիկ .. անօԹի, ծարաւ, ապուշ հայեացքներով, բայց և հանճարի վեհութեան դրօշմ իրանց ճակատին: Ինձ դժւար չէր իմանալ, որ դրանք Կ. Պօլսի ծաղիկներն ու փառքերն էին — գրագէտներ, բանաստեղծներ, գրողներ, երեսփոխաններ, ուսուցիչներ, տեսուչներ, գիտականներ, դիւանագէտներ, և այլն: Ես չը կարողացայ զսպել իմ զարմանքս, տեսնելով նրանց դէմքերի սգաւոր արտայայտութիւնը: Հարցմանըս նրանք պատասխանեցին, որ իրանց սուգն է Չերազի և Արփիարեանի բացակայութիւնը, որոնց նրանք միշտ անհամբեր սպասում են և առանց որոնց նրանք նման են ղեկը կորցրած և առագաստները պատառուած նաւի: Շատ ցաւեցայ, ճիշտն ասելով: Երբ նրանց յայտնեցի իմ ճանապարհորդութեանս մասին, ամէն կողմից Թափուեցան վրաս, առաջարկելով, Թէ ինչ կերպով որ ուզեմ նրանք հէնց հիմակւանից կը սկսեն ինձ փառաբանել, հանճարս, տաղանդս, խելքս, տեսքս ամէն բան երկինք հասցնել, „մի հատիկ ու մի տեսակ“ ներկայացնել: Սկիզբը ես ուզում էի մերժել, բայց երբ

*) Տես „Ապտակ“ Nr 2-3

ՎԱՄՊԻՐ.

ԵՒՐՈՊԱ. — ԹՈՂՆԵՆՔ ԱՆԻ, ԹՈՂՆԵՆՔ ԱՆՑՆԻ։

խօսքն եկաւ մի հատիկի ու մի տեսակի մասին, ես ինքս զարմացայ, որ այդպէս շուտ արդէն սկսել էի այդ մի հատիկների շուրջն անցնել, և ինչ ասեմ, խոստովանում եմ մեղքս, համաձայնեցայ... Երկրորդ, երրորդ, տասներորդ, քսաներորդ օրը ես դարձել էի ազգային մեծ հանճար, մեծ բանաստեղծ, մեծ գիտնական, մեծ դիւանագէտ, մեծ վէպերի մեծ հերոս, ամեն գրւածքների մէջ փառաբանւած... Եւ ես ուրախ ու իմ բախտից ապշած մտածում էի, թէ եթէ ճանապարհորդութիւնս անէի և վերադառնայի, այն ժամանակ ի՞նչ անուն պէտք է տային ինձ... Անհանգստութիւնից ասացի իմ մեծ փառափանողներից ոմանց: Նրանք ամենայն տխրութեամբ պատասխանեցին „մեծ մեծերուն մէջ, հանճար հանճարներուն մէջ“... Ես զարմացայ որ յիրաւի իմ մտատանջութիւնս պարզ պատասխան է եղել, և ինչպէս ես չը գուշակեցի այդ հէնց ինքս... Բայց ընթերցողս թող չը մոռանայ, որ ես նոր էի սկսում դաս առնել Պօլսի ինքնագովական և իրարագովական դպրոցում, և դասախօսութիւնն էլ մանաւորապէս կաղ էր այն պատճառով, որ այդ դպրոցի հիմնադիր Չերազներ ու Արփիարեաններ և այլն բացակայ էին Կ. Պօլսից, յայտնի չէ, թէ ինչ պատճառով... Վերջապէս երբ երաշխաւորութիւն ստացայ, որ աշխարհիս ամենահրաշալի քաղաքի ամենահանճարեղ քանքարներն իմ անձի մասին հարկ եղածը փայլով պէտք է նկարագրեն, հանգստացած սրտով գնացի ոստիկանատուն անցագիր վերցնելու դէպի Հրաշալիք ճանապարհորդութեանս համար...

Այստեղից սկսւում է իմ ճանապարհորդութեանս երրորդ գլուխը, որի մասին կը խօսինք յաջորդ անգամ:

ՀՍԿԱՅ — ԹԶՈՒԿ.

ՉԵՐԱԶ ՓԱՇԱ.

„Մենք, ուրեմն, կը հրաւիրենք հայ տաբագիրները հրաժարիլ ամեն քաղաքական և նոյն իսկ վարչական ինքնավարութեան նախագծերէ: Ընդհանուր բարենորոգումներ օսմանեան կայսրութեան համար բաւական են Թիւրքահայերը բարեկեց դարձնելու: Մի բարենորոգւած վարչութիւն կատարեալ դրախտ է (délices — ամենաանոյշ վայելք) հայ ՌԱՅԱՅԻ համար... Յատուկ հայերի համար ոչինչ ալ պէտք չէ, որպէսզի անոնց դէմ չը գրգռւեն տեղական միւս ազգաբնակութիւններուն նախանձը և ատելութիւնը, այլ ամեն բան թող ընդհանուր ըլլայ Օսմանեան հողի հայրենակիցներուն:“ տես l'Arménie թիւ:

Ի՞նչ կը կարծէք, ընթերցող, որմէն են այդ տողերը: Ժամանակին, ասկէ ընդամենը երկու տարի առաջ, այդ լեզուն գործածողը կը քարկոծւէր հայ հասարակութեան կողմէ, իբրև Թրքասէր և սուլթանի շահերու պաշտպան մէկը: Իսկ այսօր երբ շատերու դիմակը պատռւեցաւ, այդ ամենքն ալ իրենց աղտոտ սիրտը և թաքուն միտքը չեն կրնար ծածկել: Ընթերցող այդ դիմակաւորները դուն լաւ կը ճանչնաս: Ո՞վ կրնայ հայերը հրաւիրել հրաժարիլ ամեն „քաղաքական և նոյն իսկ վարչական ինքնավարութեան նախագծերէ:„ Մէկ՝ Մուրատ պէյը, որ այսօր դաւաճան է եղեր և սուլթանէն փաշա տիտղոսն առեր, մէկ ալ... Մ. Չերազ և իր նմանները: Ո՞վ կրնայ հայերը համոզել, որ, „բարենորոգումները բաւական են Թրքահայերը բարեկեց դարձնելու համար“ Մէկ՝ դաւաճան Մուրատները, և մէկ ալ... Մ. Չերազ և իր նմանները: Ո՞վ կրնայ սքանչանալ, թէ միայն „բարենորոգւած վարչութիւն մը կատարեալ դրախտ է հայ ռայայի համար“: Մէկ՝ դաւաճան Մուրատները, որ հայերը ՌԱՅԱ կանւանեն, մէկ ալ՝... Նոյն Մ. Չերազ և իր նմանները: Ո՞վ կրնայ սուլթանի սրտին իւղ քսելով անանկ յայտարարութիւն մը ընել թէ՝ „Յատուկ հայերուն ոչինչ ալ պէտք չէ, այլ ամեն բան թող ընդհանուր ըլլայ օսմանեան հողի հայրենակիցներուն“: Ի հարկէ միշտ և միայն նոյն հայատեաց դաւաճան Մուրատները, իսկ հայերէն միշտ նոյն և միայն նոյն Մ. Չերազ և իր նմանները:

Եւ անհանգիստ երազի մը մէջ Չերազ տեսած ըլլալով Մուրատներու դափնիները՝ արթնցած կաճապարի սուլթանի կառավարութեան ամենախոնարհ հպատակութեամբ յայտնել թէ „օսմանեան տէրութեան շահն է պահպանել իր հպատակներու, առանց ազգի և կրօնի խտրութեան, կեանքը, պատիւը և ինչքը“:

Ես կը զարմանամ թէ ինչպէս սուլթանը կարևորութիւն չի տար Չերազին մի յատուկ Ջէլալ էտտին փաշա ալ չի ղրկեր Չերազին քով... Գուցէ անիկայ յաջողի Մուրատ փաշայի ճամբով տանել մեր մեծ հայրենասէրն և շուտով նոր փառք մը աւելնայ մեր ազգին խաւար ասպարէզին վրայ՝ անունով Չերազ փաշա:

X.

ՏՕՆԱՊԵՏԱԿԱՆ ՏԻՊ.

— Ո՞րն է հռչակ ստանալու ամենակարճ ճամբան անյայտ մարդու համար:

— Ամեն տեսակ ամբաստանութիւններով յարձակւել յայտնի մարդկանց վրայ: Դա նոյնն է, եթէ մուկը խոխոտար կատուի վրայ. հետևա՞նք իր մնութիւնը ցոյց կը տայ, տան մէջ ծակեր փորելով:

***

— Ի՞նչպէս կը լինի միութիւնը:

— Պէտք է մի կողմ թողնել ամեն սկզբունք, ծրագիր, համոզում և ամեն գոյնի մարդկանց միացում միմեանց հետ:

***

— Նազարբէկների դէմ յարձակւողներն ի՞նչ են անում:

— Հրապարակային մատնութիւններ... շըրջաբերականի ձևով:

***

— Ո՞վ է սիրում հայրենիքը: Ի հարկէ նա, որը — միակ փորձը լինելով մինչև օրս — ամեն վտանգ աչքն առած՝ թափանցում Աքիայի բանտն՝ այնտեղ օգնութիւն տալու ազնիւ մարդիկ կարծւածներին և նրանց փախցնելու բանտից:

— Ո՛չ, նա չէ: Հայրենիքը սիրում է նա, որ Աքիայի բանտից դուրս գալուց յետոյ վատաբար անւանարկում է նրան, որը գաղտնի եղել է բանտը իբրև „ազատիչ հրեշտակ“, ինչպէս ինքն՝ այժմ անւանարկողն էր գրում ու ասում առաջ: Այդ անւանարկողն է անշուշտ հայրենիքի սիրողը, որ ամեն սրիկայութիւններ է անում այսօր՝ իր նմանների հետմիասին:

***

— Եթէ ինձ տաս ամսական չորս ոսկի (նոր գլխարկ, նոր կօշիկ և նոր հագուստն էլ առանձին), այն ժամանակ ես քեզ կը ծառայեմ, ամեն բան կանեմ և դու լաւ մարդ կը լինես, ես էլ քո գերին:

— Ոչ, համաձայն չեմ. եթէ դու ստորութիւն անելու պատրաստ ես, ես ստորներին չեմ կարող քաջալերել և ոչինչ գործ ունենալ նրանց հետ:

— Եթէ այդպէս, ես էլ քեզ կը հռչակեմ վատ մարդ և այլն:

— ! ? !

***

— Եթէ Հնչակեան կենտրոնն ինձ փող տւեց — չէ՞ որ Կ. Պօլսում վարժւել տաճկական բաքշիշին — այն ժամանակ ես „Հնչակի“ հետ եմ և „Հնչակը“ կը փառաբանեմ: Իսկ եթէ „Դրօշակը“ ինձ դրամ տւեց, այն ժամանակ ես „Դրօշակի“ հետ եմ և „Հնչակը“ կը հայհոյեմ և նրա գաղտնիքները կը մատնեմ հրապարակապէս:

— Իսկ եթէ սուլթանը և նրա փաշաները քեզ փող տան:

— ... Այն ժամանակ „Հնչակն“, էլ „Դրօշակն“ էլ կը հայհոյեմ և երկուսի գաղտնիքներն էլ սուլթանին կը տամ:

Այդպիսի համարձակ ու բարձր բարոյականի տէր մարդիկ են դարձել այժմ մի կարգ հայեր... և ամենայն ջերմեռանդութեամբ էլ կատարում են իրանց ասածը իբրև գործիչ:

***

— Անգլիացին զզւում է անձնական յարձակումներից, և եթէ յարձակւողը նոյն իսկ իրաւունք ունենար, մենք դարձեալ նրան իբրև վնասակար մարդու, կը հալածենք մեր ազգային ասպարէզից, քանի որ նրա յարձակումներն անձնական գոյն ունեն: Իսկ դուք հայերդ ինչպէ՞ս էք անում... Այդպէս էր խօսում հետս իմ մէկ անգլիացի բարեկամս: „Ճիշդ ձեր արածի հակառակը“, ուզում էի պատասխանել ես, բայց ամաչելով ազգիս համար, ասացի. —

— Հայերի մէջ անում են այնպէս... ինչպէս ձեռնտու է:



ԱՇԽԱՐՀԻ ՇՈՒՐՋԸ

Երբ Կ. Պօլսում սկսեցան դեսպանների ժողովները, սաստիկ փափագ ունէի ականջ դնելու նրանց՝ դռան ետևից: Եւ դա՝ ո՛չ թէ նրանց վճիռների մասին հետաքրքրութեանս գոհացում տալու, այլ զւարճանալու համար: Իսկ այսօր այդ փափագն էլ չունեմ. գիտեմ որ նրանց ականջ դնելն էլ ձանձրալի կը լինի:

— 0 —

Երբ Կ. Պօլսում պայթեցան ռումբերը՝ օտար դեսպանները մարդիկ ուղարկեցին սուլթանի մօտ, հարցնելով թէ այդ ինչ է: Սուլթանն անխռով կերպով պատասխանել է՝ „հայկական հրախաղութիւն“: Բայց հրախաղութիւնը չը խանգարեց, որ դրա պատճառով ութ հայ կախէր:

— 0 —

Եւրօպական բուրժուազիան ուրախութիւնից հմայւած ու զգացւած աչքով է նայում սուլթան հրէշին: „Ուժեղը տկարին պէտք է յաղթէ“, պոռում է նա: Մրցման սկզբունքի պաշտպան ու ներկայացուցիչ բուրժուազեան շատ լաւ գիտէ միլիոնաւորին տնտեսապէս, նիւթապէս թշւառացնել մի հարուստ բուրժուայի համար, և այսօր սքանչացած է, որ սուլթանն էլ նոյնն է կատարում քաղաքականապէս: Եւ սքանչանալով հրէշի նկատմամբ, նա երգում է իր սիրած ցայգերգը — „Թող անի, թող անցնի„: Միայն նախանձում է, որ ինքն էլ չէ կարող այդ նոր հրէշավամպիրի պէս իր ոտքի տակ խողխողել տըկարներին:

— 0 —

Մանչեստրի հայերից մէկն անցեալները գրել էր մի յօդւած անգլիական մի թերթում: Յօդւածը հայոց խնդրի մասին էր: Յօդւածում մի տեղ ասում է, թէ եթէ ինքը քաղաքագէտ լինէր՝ այս և այն կասէր ու կանէր, և շատ ու երկար ասում է թէ ինչ կասէր: Բայց քանի որ քաղաքագէտ չես, հէր օրհնած, աւելի կարճ ճամբան չէ՞ր, որ բոլորովին չասէիր այն, ինչ ասում ես: Այդպիսով դու ոչինչ չէիր կորցնիլ, մենք էլ քո անքաղաքագէտ լինելը չէինք իմանալ: Լռել իմանալը՝ առաքինութիւն է:

— 0 —

Հաստատ աղբիւրներից տեղեկանում ենք, որ Ալֆարիական Արշակաւանի կենդրոնն այժմ փոխադրւել է Դամասկոս. — Նազըմ փաշան հիմա այնտեղի վալի է նշանակւած:

ՀՐԱՇԱԼԻ ԵՐԿՈՒ ՆԿԱՐՆԵՐ.

Նորին վեհափառութիւն Վիլհէլմը, իր վերջին արտադրած հրաշագեղ նկարներից երկու-

սը նւիրել է իր երեց եղբօր սուլթան Համիդին՝ վիրաւոր զինւորների ի նպաստ՝ Ըլտըզ-քէօշկում պալատի պատից կախտալու համար:

՝Նկարներից մին ներկայացնում է՝ սուլթանը և Վիլհելմը ոտի կանգնած մի լուրջ խօսակցութեան մէջ: Վիլհելմը խորհուրդներ է տալիս սուլթանին, իսկ վերջինս միշտ երախտագէտ ժպիտով գլուխ խոնարհեցնում: Վիլհելմից քիչ հեռու մութի մէջ կարգով շարւած են գերմանական սպաներ, վաճառականական ակէնտներ, հաստափոր փողատէրեր, երկրաչափներ և այլն, որոնց Վիլհելմը ձեռքի շարժումով հասկացնում է, գնացէք ամբողջ Թրքական կայսրութեան մէջ և ձեր ուզածին պէս շահագործեցէք:

Երկրորդ նկարը ներկայացնում է, գարձեալ Վիլհելմը և սուլթանը քովքովի կանգնած իրանց որոշումներն ու պահանջներն են մէջտեղ դնում, և միւս հինգ պետութիւնները խոնարհաբար ընդունում են...

ԾԻԾԱՂ.

ԳՈՀԱՑՈՒՑԻՉ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ.

Մարկոս. — Ի՞նչն էր ստիպում քեզ Լօնդօն գնալ և Հնչակեանների հետ միանալ պարօն Պ. Տ.

Պ. Տ. — Ինձ հարկաւոր էր մի կերպ ապրել, Եգիպտոսում անօթի հօ մեռնելու չէի, ես մինչև անգամ անպատւութիւն էի զգում Նազարբէկների բարեկամ ցոյց տալ ինձ, որովհետև ազգը նրանց թշնամի է, և թէպէտ ես ինքս ականատես վկայ եմ, որ Մարիամ Նազարբէկը մինչև Աքքեայի բանտը եկաւ բանտարկեալներին մխիթարելու համար. բայց այդ ոչինչ. ես Լօնդօն եկայ և Հնչակեան ձեւացայ մի առժամանակ ապրելու համար:

Մարկոս. — Իսկ հիմա ապրելու միջոց ունե՞ցար, որ Հնչակեաններից հեռացել ես:

Պ. Տ. — Այո՛, տարակոյս չը կայ, ի՞նչպէս կարող էի գլխուս ճարը չը նայած հացիցս զրկւել, սխա՞լ եմ միթէ, փառք Աստծու հիմա Արփիարն էլ կօգնէ ինձ, Չերազն էլ և Դաշնակցութիւնն էլ, որովհետև այս վերջինիս հետ կապս խզած չէի, որպէսզի եթէ Հնչակեան հացից զրկւէի Դաշնակցականների մօտ տեղ ունենայի:

Մարկոս. — Զարմանում եմ, բայց միթէ Հնչակեանները քեզ անօթի էին թողնում:

Պ. Տ. — Ո՛չ, բայց ես նրանցից ամսական պահանջեցի, աւելի հանգիստ ապրելու համար, նրանք չընդունեցին. ես այդ բանից զայրացած հեռացայ և հիմա սոսկալի թշնամի եմ նրանց:

Մարկոս. — Բայց Պարիզ ի՞նչու ես եկել, միայն Լօնդօն, աւելի լաւ չէ՞ր:

Պ. Տ. — Չէ՛, ախր Պարիզ աւելի սիրուն տեղ է, չէ՞... Բացի այդ և ունիմ կարևոր գործ այստեղ պարօն... ի հետ, որը այսօր կարգադրելուցս յետոյ կը վերադառնամ Լօնդօն իմ վաղեմի բարեկամներին՝ Չերազ և Արփիար էֆէնտիների մօտ...

Բ. ԹԻԿՆԱՊԱՀ.

ԸԶԳԸՑԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ.

ՃԱ՛Ռ, ՃԱ՛Ռ,

Տօնապետեանը խօսում է իր նոր բարեկամի հետ, —

„Եղբայր, նախ որ ես հրապարակաւ ալ կրնամ ըսել և հաստատել թէ Նազարբէկը իրբ կը փոխէ իր ապիտակեղէնը... Բայց գըլխաւորն ան է որ անիկա օրը միայն մէկ անգամ կը ճաշէ: Այդպիսի բան կըլլա՞յ... գործիչ մարդը պիտի օրը առնուազն երկու անգամ կուշտ ճաշէ, որով ես ալ անօթի չէի մնար, բաց առնել այն կարևոր պայմանը որ կուշտ փորով ալ գործիչ մարդը կրնայ աւելի եռանդով գործել... և հասարակութեան շահն ալ արդէն այդ կը պահանջէ... Եղբայր, ինչո՞ւ համար հասարակութիւնը դրամ կուտայ ընկերութիւններուն“..

Այդ երկաթէ տրամաբանութեան առջև „անօթի“ Տօնապետեանի խօսակիցը շատոյաւ միայն հիացած կերպով ականջը կախ՝ լսելով...

ՆՈ՛Ր ԿՕՇԻԿ, ՆՈ՛Ր ԿՕՇԻԿ,

Հէնց այն գեղեցիկ օրը, երբ ալւէսական Թաթով արփիարական նոր ձագուկ Տօնապետեանը քիչ էր մնում Թակարդն ընկնէր իր անվայել ընթացքի համար՝ նա յղացաւ մի հանճարեղ միտք, — փախչել. և երկրորդ օրն առաւօտը կանուխ գաղտնագողի կերպով նա անհետացել էր: Ի՞նչ անի, ինչ չանի, որ իր ամօթը ծածկի... Դարձեա՛լ հանճարեղ միտք (չէ՞ որ Բօսֆօրի ջրումն է մկրտւել)... Նամակ է գրում Հնչ. Կ.-թեան կենտրօնին և իր փախուստն անտեղի յերիւրանքներով ճգնում է բացատրել, ի վերջոյ խնդրելով իրան չորս ոսկի ամսավճար տան. և բացի դրանից „պէտք եղած առենները նոր կօշիկ, նոր գլխարկ և նոր հագուստ“... ճիշտ և ճիշտ այդպէս, ես ու իմ արևը... Ծիծաղո՞ւմ էք, ընթերցող... Նրա այդ նամակը կայ... Եւ այդ բոլորը չէ. խոստանում է որ այդ պայմանով միայն „պիտի շարունակէ կատարել այն բոլոր Թղթակցութիւնները որ իրեն յանձնի“: Ամսավճա՞ր... քանի՞... — Չորս ոսկի: — Չո՞րս ոսկի. երկուս ու կէսով չի՞ լինի... — Չէ, եղբայր, չըլլար... Յեղափոխակա՞ն ես: — Յեղափոխական եմ: — Դիթումի հատը քանի՞ է: — Տասը կոպէկ: — Պակաս չի՞ լինի: — Չէ՛.. Իս չիթի մէկ արշինը քանի՞ է: — Մէկ ռուբլի քսան կոպէկ. — Պակաս չի՞ լինի: — Մէկ ռուբլի: Այ ազնիւ մարդ, սակարկել գիտէ: Իսկ անազնիւ է Հնչ. Կուսակցութեան կենտրօնը. նա չուզեց մինչև լսել Տօնապետեանին... Նա Տօնապետեանին պատասխանեց Թէ ամսավճար տալ հակառակ է Հնչակեան կանոնների և երբէք էլ, ոչ մի պարագայում չէ դել Կ. — Թեան մէջ այդպիսի չարչիական դրութիւն. և, ի հարկէ, նրա առաջարկն անընդունելի եղաւ, և մեր չարչին զրկւեցաւ... կօշիկից: Հարկաւ, ի՞նչ անէր խեղճն այսուհետև, երբ տեսաւ, որ իր այդ իդէալը չէ իրագործւում: Նա սկսաւ խիստ հաջել իրան նոր կօշիկ չը տւողների վրայ և բախտ որոնել այլ և այլ բակերում: Պարզ բան է, որ եթէ իրան չորս կլօրիկների հետ ամեն ամիս էլ նոր կօշիկ տրւէր, խեղճն այլ ևս հաջելու պէտք չէր ունենալ, այլ կը շարունակէր իր մէջքը ծռել և երեսի հաճոյակար ծամածռութիւններ անել նրանց առաջ, որոնց վրայ այժմ անձնական կատաղութեամբ փրփրում ու յարձակւում է...

՝Խախազգուշութիւն այն խմբերի բակերին, որոնց դուռն է ծեծում այդ նորատեսակ պըտուղը: Եթէ ուզում էք նրան պահել և հաջեցնել տալ ուրիշների վրայ և կամ նոյն իսկ... որ և է այլ ծառայութեան համար, անհրաժեշտ պայման — ամիսը մի զոյգ նոր կօշիկ... Եւ ամեն բան կը կատարէ ձեզ համար... Եթէ գոհացում չը տւի իր իդէալին... իմացէք, վաղը կերթայ մէկ ուրիշ բակ և յետոյ կըսկսի ձեր դէմ էլ քաջութիւններ անել:

ԱՄԷՆ.

„ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ՊԱՏՐԱՍՏԻԱԾ.“

Երէկ փողոցով անցնելիս ես կանգ առի մի վաճառատան առաջ, որի պատուհաններին մէջ դրւած էին զանազան վաճառելի նիւթեր. չը գիտեմ ի՞նչու, բայց իմ ուշադրութիւնս գըրաւեց աւելի այն պատուհանը, ուր խառնիխուռն իրար վրայ դիզւած էին յաղջապակեայ ամաններ, լամբի շիշեր և այլն: Պատուհանում խոշոր տառերով գրւած կար հետևեալ յայտարարութիւնը. — „ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ՊԱՏՐԱՍՏԻԱԾ.“ միևնոյն նախադասութիւնը գրւած էր նոյնպէս իւրաքանչիւր առարկայի վրայ: Այո՛, շատ ճիշտ է, մտածեցի ես ինձ, որովհետև

Կրէտէի պաշարումն էլ — „Գերմանիայում պատրաստւեց“
Յունա-Թրքական պատերազմն էլ „ „
Թրքական բանակի զէնքերն ու
Թնդանօթներն էլ „ „
Պատերազմական չորս միլիօն
տուգանքն էլ „ „
Խաղաղութեան բանակցութիւնների
խայտառակութիւնն էլ „ „
Ու ինչպէս երևում է ապագայ պատերազմն էլ Գերմանիայումն է պատրաստւում:

ԾԻԾԱՂ.

ԱՍՏՂԱԲԱՇԽԸ.

Ծերուկ աստղաբաշխ մը, Ռուսաստանէն լիքը ներշնչող բարոյական զօրութիւններու տպարաններ, 92 ջորիներու վրայ ձգած հանդերձ տիլտիլներով, յամրընթաց և դանդաղ կերպով կերթար միհեռու երկիր:

Իր „փէշակ“ ջորիի գլխին փակցուցած ունէր մի յայտարարութիւն հետևեալ իմաստով. — Ամերիկայ Լ. քաղաքը՝ երևցած է մի փայլուն աստղ, որը ունի մի տեսակ „Թըլըսըմ“ որ եթէ քոռերը, կաղերը, տգէտները, յիմարները, սէրսէմները, ապուշները և որ, ամենագլխաւորն է, սև երես ունեցողները հաւատքով նրան նային, ինչպէս Մովսէսի կարմիր օձն անապատի մէջ, իսկ և իսկ բժշկութիւն կը գտնեն: Իսկ այդ յայտարարութեան Ց. գրութեան մէջ աւելցւած էր հետևեալը — „ով որ ինձ չէ հաւատար թող կարդայ Մշակի 1897 Յուլիս 26 թիւն:“

՝Նոյնպէս ճանապարհորդ մը որ Ամերիկայի այդպիսի շատ մը փայլուն աստղերի մարիլը տեսած էր, դարձաւ դէպ ծերուկը ասելով. շատ կը ցաւիմ ըսելու որ ձեր աչքերն շլացած են այդ աստղի լոյսէն, և պարապ տեղը զւարճներով բեռնաւորւած ձեր ջորիները կերթաք անոր ծնրադրելու. շատ հաւանական է մինչի ձեր հոն հասնիլը՝ ինքն ին մարի ինչպէս իր նախորդները:“

ՍՈՒԼԹԱՆԻ ԵՐԿԻՒՂԸ,

Ըլտըզ-քէօշկում այս րոպէիս մեծ իրարանցում կայ [illegible] ժողով, անվերջ ժողովներ են գումարւում, ժողովի հոգս պատճառող հարցը Հէրր Անդրէի օդապարիկն է: Սուլթանը իր խորհրդատու բարեկամներից իմացած լինելով, որ Հէրր Անդրէ օդապարիկում իր հետ վերցրած ունէ նորաձև մի վիթխարի հրացան շատ աւելի կատարելագործւած քան Մաքսիմեան հրացանները, և այն առաւելութիւնն էլ ունէ սա, որ մի պայթումով հազար շէնքեր հիմնայատակ է անում: Գիւտը, ասում են, Հէրր Անդրէինն է և որը իր օդային ճամբորդութիւնը կատարելուց յետոյ վերջին օրը պէտք է անցնէ Կ. Պօլսից, Ըլտըզ-քէօշկի վրայ օդում կանգ պէտք է առնէ մի քանի րոպէ և... ի՞նչ էք երևակայում, իր հըրազէնի խողովակը պիտի ուղղէ ուղիղ Ըլտըզի վրայ և... րոպէին հիմնայատակ պիտի անէ Ըլտըզը...

Հէրր Անդրէ խորամանկ կերպով Պօլիս հասնելու օրը չէ նշանակել, որպէս զի սուլթանին յանկարծակիի բերէ: Սուլթանը իմանալով որ Հէրր Անդրէի պալօնը արդէն Դանիայից անցել է, ուրեմն և Պօլսից էլ հեռի չէ. շտապեց հաւաքել իր մինիստրներին, շէյխերին և իւլէմաներին նրանցից խորհուրդ հարցնելու: Երբ ժողովը չէր իմանում ինչպէս առաջն առնել այդ արհաւիրքին, յանկարծ Շէյխիւլիսլամը հետևեալ միտքն յայտնեց. — „լաւ կը լինէ ձերբակալել մայրաքաղաքում գըտնւած բոլոր կասկածելի հայերին և նրանց ենթարկելով ինկւիզիցիայի իմանալ, թէ ո՞վ նրանցից կարող է ռումբեր շինել և գործածել, որպէս զի և Հէրր Անդրէի պալօնին ռումբով դիմադրեն:“ Ժողովը հաւանեց այս գիւտին և վճռեց ձերբակալել հայերին, որը և դեռ շարունակւում է... ԾԻԾԱՂ.

ԱԶԴ.

„Եպտակի“ ներկայ համարի նկարը հանւած է առանձին թղթի վրայ:

ԼՕՆԴՕՆ. „ՀՆՉԱԿԻ“ ՏՊԱՐԱՆ.